լաւիկը (Pahlavīk), որուն հետ կրնան կշռուիլ Պարսիկի (Pārsīk) համար՝ Հրատարակներու (fratarak), այն է՝ Պարսից ժառանգական կառավարիչներուն, դրամներուն ընթերցուածները, նախաքրիստոնէական Գ. դարէն սկսեալ:

ՎՐԱՑՍՏԱՆ ԵՒ ՀԱՑԵՐԸ

(Շարունակութիւն:)

Բ. ԳԼՈՒԽ

Ժողովրդական խմբովին տեղափոխութիւնների պատճառները եւ հետեւանքը: Վրաստանը կազմող նախնական ցեղերը: Իրանական գերիշխանութիւնը: Հին պատմագիրները Վրաստանի մասին: Վրաստանի ցեղային եւ տեղական բաժանումները: Վրաց ազգային աւանդութիւնը: Վրաստանի եւ Վրացիների տարբեր անունները:

—

Պատմագրութիւնը՝ համաչխարհային պատմութեան ընթացքը բացատրում է ժողովուրդների խմբովին տեղափոխութիւններով: Նոր հնութեան մէջ այս տեղափոխութիւնները իրենց չատ պարզ եւ բնական պատճառն են ունեցել: Երբ երկիրը՝ մարդոց աճումի կամ որ եւ է այլ պատճառով, բնակիչներին բաւականաչափ անունդ չէ տուել, մարդիկ խմբովին գաղթել են ուրիչ տեղեր, իրենց համար դոհացուցիչ ուտելիք գտնելու նպատակով: Իսկ յետոյ, այսինքն որքան նախապատմական ժամանակներից մօտենում ենք մեր դարերին, այնքան էլ պատճառներն ու առիթները փոխուել են: Դրանց վրայ պէտք է աւելացնել պատմութեան սկզբնական շրջանի ցեղական ռազմական արշաւանքները, եւ ապա բարբարոս կոչուած ժողովուրդների տեղափոխութիւնները, որոնց չնորհիւ մարդկային ցեղերը յարաւեւ ճնշում են գործ դրել միմեանց վրայ:

Այս համայնական չարժումները քանիցս կերպարանափոխել են Կովկասի եւ մանաւանդ Անդրկովկասի ազգարնակութեան կազմն եւ ազգագրական դիրքը: Անդրկովկասի բնակիչները հին դարերի ընթացքում, այս միջոցով քաղաքական եւ մշակութային յարաբերութիւնների մէջ են գտնուել աւելի հարաւ բնակուող ուրիչ ցեղերի հետ, որով մի ժողովրդի մէջ երեւան եկած մշակութային արտադրութիւն աւելի կամ նուազ չափով սեպհականութիւն է դարձել նրա հարեւաններին:

Այս կերպով տարածուել եւ ընդհանուրի յատուկ են դարձել կրօնական հաւատալիքներ եւ պաշտամունքի առարկաներ, աւանդութիւններ, ժողովրդական ասացուածքներ, դիւցազներգական գործիքներ եւայլն: Նոյն ձեւով մէկ ժողովրդից միւսին են փոխանցուել նաեւ ընտանեկան կեանքի սովորութիւններ եւ հասարակական կամ պետական կազմի եղանակներ: Սակայն այդ յարաբերութիւններից ամէնից աւելի ազդուողը լեզուն է եղած: Այս պատճառով է, որ ցեղերի ծագման կամ նրանց նախապատմական ժամանակների փոխադարձ յարաբերութիւնների վրայ դաղափար կազմելու գլխաւոր միջոցը՝ նրանց լեզուի կազմութեան տարրերի քննութիւնն է համարւում:

Վրացի ժողովուրդը ինչպիսի՞ ցեղերից է բաղկացած եւ ե՞րբ է հաստատուել իր այժմեան հայրենիքում:

Նախորդ գլխում տեսանք այն կարծիքը, որ կայ հին Ուրարտուի ժողովուրդի եւ Վրացական ցեղախումբի մէջ: Կայ մի ուրիչ ցեղ, որ գլխաւոր արմատն է այս կովկասեան խումբի, եւ որի անունը պահուած է Մ. Դրբեան: Մովսէս եւ Եզեկիէլ մարգարէները յիշում են Մեսեխ եւ Թուբալ կամ Տուբալ ցեղերն, որոնք առուտուր էին անում փիւնիկեցիների հետ, պղնձէ ամանեղ եւ գերիներ փոխանակելով: Ասորեստանեան սեպագիր արձանագրութիւնների մէջ այս ցեղը կոչուած է Մոսք, Մուսքի եւ Մուսքայի, միշտ նոյն Տուբալ, Տաբալ կամ Տիբարէնի ցեղի հետ միասին: Դարեր անցնելուց յետոյ այս Մոսքերը՝ Տիբարէնների հետ տեղափոխուելով եկել հաստատուել են հարաւային Անդրկովկասում, կուր եւ Արագվա գետերի հովիտում: Այս նոր բնակավայրին Մոսխ = Մէսխերը տուել են իրենց անունը, Մէսխէթի, այսինքն Մէսխ-ք (Մէսխերի երկիր): Վրաստանի երբեմնի մայրաքաղաք Մծխէթան (կամ Մցխէթը) եւս նրանց անունով է այդպէս կոչուած:

Հայոց պատմութեան եւ աշխարհա-

գրութեան մէջ յաճախակի յիշուած մի ուրիչ ցեղ եւս, հաւանականաբար դեր է կատարած այստեղ: Այս ցեղը կարդուբ կամ կորդուաց ժողովուրդն է, որ բնակւում էր Վանի լճի հարաւային կողմը: Հայ Աշխարհագրութիւնը «Կորդուաց երկիրը» դնում է իբրեւ «15 աշխարհներից» մէկն, որի մէջ մտնում էին Մոկք, Աղձնիք եւ Գորդայք կամ Կորճայք: Բաւնունին նրանց հանդիպել է այնտեղ, երբ անցնում էր Հայաստանի ճանապարհով իր «Տասնհազարով» (401 Ն· Ք·): Մինչեւ վերջին ժամանակ այնպէս էին կարծում թէ «Կորդուք»՝ քիւրդերն են, անուններով նահանգներից չվոթուելով: Բայց ապացուցուած է կարծեմ թէ քիւրդերը քաւնունի ժամանակ դարից յետոյ են եկել եւ հաստատուել այն կողմերը:

Վրացի պատմագէտներն եւ նրանց հետ Լէման-Հաուպտ համոզուած են թէ վրացական ցեղախումբի քարթ կամ քարթ-վէլ անունակոչումն այն կորդուբ կամ կալդուէյս ժողովրդից է առնուած: Լէման-Հաուպտ յատուկ է բերում մի չահեկան փաստ, այն է թէ կարդուբ եւ քարթ-լի ձայնական կապ ունին իրար հետ (ՀԱ· 1931, էջ 209): Շատ ուշադրաւ է եւ իրրեւ այս կարծիքի հաստատութիւն է ծառայում այն հանգամանքն, որ Կովկասեան հարեւան ցեղերն, ինչպէս Մինգրէլները (կամ Մէգրէլ) եւ Ազխազները, կենդրոնական Վրաստանի բնակիչներին այսպէս անձուկ մտքով Վրացիներին մինչեւ հիմայ էլ Քորքու կամ Քարքու են կոչում:

Հերոդոտոսի ժամանակ (Ե· դար Ն· Ք·) ամբողջ Անդրկովկասը Սեւ ծովից մինչեւ Կասպից ծով, Պարսից գերիշխանութեան տակ էր գտնուում: Ցոյն պատմագիրը այդ տեղերի ժողովուրդներին յիշում է անուններով: Նա գրում է թէ «Մատիանները, Սասբով: Նա գրում է թէ «Մատիանները, Սասբերը, եւ Ալարոդները պարսկական 18գ սատրապութիւն (նահանգային կառավարութիւն) էին» իսկ Մոսխերը, Տիբարէնները, Թիւն) էին» իսկ Մոսխերը, Տիբարէնները, Մաքրոնները, եւ Մոսինէքները 19գ սատրապութեան մէջ էին (Հերոդոտոս, Գիրք Ա· 194): Վերեւ յիշուած ցեղերից արժէ կանգ առնել նաեւ Մատիան կոչուածի վրայ: Այս Մատիան կամ Մատիէնները, հաւանականաբար նրանք են, որոնք հին Եգիպտացիներից Միտանի են կոչուած: Հին Եգիպտացիք Միտանիի հետ յարաբերութեան մէջ են եղել նրանց հետ յարաբերութեան մէջ են եղել Թե· դարում Ն· Ք·: Սրանք մի ժամանակ ուժեղ կազմակերպութիւն են ունեցել Փոքր Ասիայում Միջագետքի սահմանների վրայ, եւ կապպադովկացիների, Փռիւգացիների եւ Հայերի այդ կողմը գալուց յառաջ մեծ դեր են կատարել: Բայց Ե· դարում (Ն· Ք·) այդ Միտանիները արդէն կործանուած եւ ցրուած էին[2]:

Մատանիների լեզուն առաջին անգամ լոյս աշխարհ է եկել էլ-Ամառնայի (Միջագետքում) պեղումների ժամանակ, հին աղիւսների վրայ փորուած արձանագրութիւններից: Գիւնութիւնից երեւացել է, որ այս Միրից: Գիւնութիւնից երեւացել է, որ այս Միտանիների լեզուի կազմի, նշանագրերի, բառերի եւ Խալդեան (Վանի) սեպագիրների մէջ նմանութիւն կայ, որից հետեւցնում են թէ այս երկու լեզուներն ազգակից են իրար: Նոյն իսկ Միտանի անունը մեկնում են վրացերէնով: Վրացերէնն մթա նշանակում է՝ գեղ բնակավայրը: Ուրիչ խնդիր է թէ կոչ բնակիչ է 3000 տարուան հնութիւն ունեցող մի բելի՞ է տարածական գործածական լեզուով տուրբան այսօրուան գործածական լեզուով տուրբան դարանել:

Անդրկովկասում հաստատուած հարաւային ցեղերն, երկար ժամանակ ապրել են այստեղ առանց իրար հետ քաղաքական կապ ունենալու եւ չատ իրար հետ կռուելով, այնպէս ինչպէս էին նրանց նախնիքը Ուրարտուի մէջ կամ նրա չուրջը, իրենց արքայիկտուի մէջ կամ նրա չուրջը, իրենց արքայիկտուների իշխանութեան տակ: Այս հանգամանների իշխանութեան տակ: Այս հանգամանների իշխանութեան տակ: Այս հանգամանների փոխանակ համեմատաբար աւելի գործեղ քից օգտուելով համեմատաբար աւելի գործեղ քից օգտուելով համեմատաբար աւելի գործեղ քից օգտուելով

Իրանական ցեղերն աւելի բազմամարդ եւ մանաւանդ աւելի ռազմասէր լինելով քան հայերը, մեծ ախրութիւն էին կազմակերպել, որ աւելի ուժեղ էր քան Հայաստանն ու Վրաստանը միասին, եւ նախ Հայաստան–Արմէնեան, ապա Վրաստան–Գուրջանը դէնքի ոյժով իր իշխանութեան տակ էր դցել: Իրանական այս գերիշխանութիւնը երկար դարեր ազդած է հայ եւ վրացի ժողովուրդների քաղաքական եւ բարոյական վիճակի վրայ:

Օտար պատմագիրներից, Ստրաբոն, ծննդեամբ պոնտացի լինելով, առանձնապէս հետաքրքրութիւն է ցոյց տուած իր դրացի երկրի, Վրաստանի նկատմամբ: Վրաց հետ անընդմիջական յարաբերութեան մէջ գտնուղ հռոմէացի պաշտօնակալներից եւ առեւտրականներից քաղելով, ինչպէս եւ իր անձնական տպաւորութիւնների վրայ հիմնուելով չատ բան է գրած յատկապէս արեւմտեան Վրաստանի մասին, որ Կողբիսն էր: Նրա աչելով Կուր գետի հովտում էլ բնակւում էր մի ժողովուրդ, որ երկրագործ եւ խաղաղասէր էր եւ Հայոց ու Հնդկաց նման էր կազմակերպուած: Իսկ լեռնազատաններում բնակող ցեղերը ռազմասէր էին եւ ապրում էին Սկիւթացիների եւ Սարմատացիների նման սովորութիւններով, թէպէտ երկրագործութիւնով էլ էին պարապւում:

Հերոդոտոս էլ պատմում է թէ Սեւ ծովի եղերքին բնակող ցեղը, Կողբիսները (այժմեան Մինգրէլների նախորդները) թլփատւում էին եւ ապրում էին գլխաւորապար կտաւատի (lin) արտադրութեամբ եւ առեւտրով, որը նրանք մշակում էին եգիպտական եղանակով եւ ոչ թէ յունական, որից նա եղրակացնում է թէ Կողբիսները «եգիպտական ծագում» ունին...: Այս Կողբիսներն, եւ իրենց ցեղակիցները, Մոսխերն եւայլն, մի–եւնոյն ձեւով էին զինաւորուած: Նրանք արշաւանքի էին գնում իրենց պետերի առաջնորդութեան տակ, փայտէ եւ կաշիէ գլխանոցներով, եղան կաշիէ վահաններով եւ սրածայր տէգերով. կռում էին մեծ դանակներ: Իսկ Քսենոփոն յիշում է թէ այս ցեղերը յատկահատական ֆաթութեամբ էին կռւում իր ցօրքի, Յոյների հետ. նրանք սիրում էին պարել, երգել եւ զուարճանալ նոյն իսկ արշաւանքների մէջտեղ...: Այս ցեղական յատկութիւնները մինչեւ հիմայ պահպանուած են Վրացիների մէջ:

Տեսնենք այժմ թէ ո՞ւր են տեղաւորուել այս նախնական ցեղերն եւ ինչ ցեղային անուններով են նրանք յայտնի:

Ներկայ Վրաստանը գրաւում է Կովկասի կենդրոնական մասը, տարածուելով Սեւ ծովի եղերքից մինչեւ Կասպից ծովը, եւ սահմաններ ունենալով՝ հիւսիսից Կովկասեան լեռնաշղթան, իսկ հարաւից Հայաստանը՝ ճշդորէն Փամբակի ձորը: Երկրի բնական խորտուբորտ դիրքի չնորհիւ, Վրացի ժողովուրդը պահել է մինչեւ հիմայ իր ցեղային բաժանումները, որոնք բնակւում են՝ ոմանք իրարից որոշակի անջատուած գետային հովիտներում, ոմանք էլ կառչել մնացել են իրենց լեռնային բարձրադաւառների վրայ:

Վրաստան հարուստ է գետերի կողմից: Այս գետերից՝ Ինգուր, Րիոն, Ճորոխ եւ Ցխէնիս–Ծղալի (= Ջիու ջուր) կոչուածը՝ թափւում են Սեւ ծով: Ամենամեծը կուր գետն է (վրացերէն Մտկվարի), որ հոսում է դէպ ի կասպից ծով, աջից ու ձախից բազմաթիւ գետակներ ընդունելով, ինչպէս՝ Ալրամ, Լեռխվի, Քսան, Արագվա, Իօր եւ Ալազան:

Վրացական ցեղերը բնակւում են այս չրջանում: Սեւ ծովի եղերքից սկսելով Ինգուր եւ Րիոն գետերի աւազաններում գըտնում են Ափխազները, Մէգրէլներն եւ Գուրիացիք: Րիոնի հիւսիսակողմի հովիտում բնակւում են Իմէրէլները: Ճորոխի աւազանում տարածուած են Աճառներն (Աջարացիք) եւ Լազերը: Կուր գետի ազբերակունքի վրայ են բնակւում Մոսխերը, իսկ մինչեն մասի չուրջը Քարթվէլներն եւ Կախերը: Լեռնային ցեղերն են Սվանները, Խեւսուրները, Փշաւները, Թուշերը եւ այլ մանր խումբեր, որոնք գրաւում են Վրաստանի բարձրադաւառները: Այս ցեղերից ոմանք իրենց յատուկ տեղական անուններն ունին ինչպէս Ջաւախի, Կուխի, Կոլխի եւայլն[3]:

Այս ցեղերից ամէն մէկն ունի իր յատուկ բարբառը, որ զգալի կերպով տարբերւում է միւսներից. բայց նրանք ընդհանուր ազգակցական կապով միացած են իրար եւ այս հանդամանքի չնորհիւ առանձին լեզուախումբ են կազմում Կովկասեան բազմատեսակ լեզուների չարքում: Այս Վրացական բարբառների գլխաւորն եւ ամէնից տարածուածը՝ կենդրոնում, Քարթլիում խօսուած քարթուլերէնն է, վրացերէն՝ քարթուլի, որ նշանակում է Վրացական լեզու: Այս քարթերէնը կամ քարթուլին, ոչ միայն միւս Վրացական բարբառների, այլ առհասարակ կովկասեան կոչուած տեղական բազմաթիւ լեզուների մէջ միակն է, որ ունի իր սեպհական գիրն ու գրականութիւնը, այս պատճառով էլ գրական լեզուի մեծութիւն ընդունելով գործել է Վրացական ցեղերի ընդհանուր գրական լեզուն, այժմեան գործածական վրացերէնը:

Վերեւ յիշուած ցեղերից ամէն մէկն ունի իր մասնաւոր պատմութիւնն, որի վրայ արժէ մի ընդհանուր ակնարկ նետել:

Առաջին տեղն իրաւամբ գրաւում է Կողբիսը, որ այժմ կոչւում է Մէգրէլների = Կողբիսցիք կամ այժմեան Մէգրէլների նախնիքը, չատ հին ժամանակներից ի վեր յարաբերութեան մէջ էին Միջերկրականի հին քաղաքակրթուած ժողովուրդների հետ, չնորհիւ իրենց ծովեզրեայ դիրքին: Փիւնիկեցիները չատ անգամ մտել են իրենց առագաստանաւերով Սեւ ծով, պտտել նրա չուրջն եւ ուր որ, ինչ որ իրենց յարմար են գտել, հաստատել, տարել են, ի հարկէ փոխանակութեամբ: Կողբիսից նրանք տարել են գլխաւորապար ձկնեղէն, արդի պատրաստելու մեծ պատիներ, բայց նաեւ արծաթ եւ ոսկի:

Մինգրէլիայի հարաւակողմում բնակւում են Մէգրէլների ցեղակից Լազերը կամ Ճանները, որոնք ամբողջապէս մահմեդականացած են եւ ինչպէս ըսինք, տարածուած են ծովի ափերից մինչեւ Տրապիզոնի ծովեզերքը: Լազերն ունին իրենց յատուկ բարբառն, որ քիչ է տարբերւում Մէգրէլների բառից եւ հասկանալի է վրացերէն գիտողին:

Մինգրէլիան, կամ հին Կողբիսը (Colchide) երկար ժամանակ բիւզանդացիների իշխանութեան տակ էր, որոնցից պարսիկ Սասանեանները աշխատում էին խլել: Քաղաքական յաջող հանգամանքներից օգտուելով հայ Բագրատունիների մի ճիւղը այստեղ հիմնել էր իր հարստութիւնը (իշխանութիւնը), որ յետոյ մերձակայ ափխազ եւ քարթլեան իշխանական տների հետ խնամութեան չրթայեան վրացիացաւ: Կենդրոնական Վրաստանի՝ մահմեդականներից գրաւուելն արգելք եղաւ որ այս Բագրատունիները Տայքից եւ Սամցխէից անդին չկարողանան յառաջանալ եւ այդտեղ սպառեցան: Նրանց իշխանութիւնն անցաւ սահմանակից Ափխազիայի թագաւորների ձեռքն, որոնք բազմաթիւ չիշատակարաններ կանգնեցին եւ յաջողեցան յառաջանալ դէպ ի արեւելք մինչեւ Կախէթ:

Ափխազիան եւս 250 տարի Քրիստոսից յառաջ, Ճունաց ձեռքն էր, որոնք գաղութ էին հաստատել այնտեղ եւ Անդրկովկասի ճանապարհով առեւտրական յարաբերութիւն ունէին կենդրոնական Ասիայի եւ Հնդկաստանի հետ: Ափխազիան անցաւ Միհրդատ Պոնտացու եւ ապա Հռոմայեցիների ձեռքը: Դիոկղետիանոս կայսեր ժամանակ այս երկիրն աքսորավայր էր, ուր Հռոմէական կայսրութեան մէջ: Ափխազիայում քրիստոնէութիւնը մտած է 2· դարում եւ Յուստինիանոս կայսրն այնտեղ առաջին եկեղեցին է հիմնել:

Ափխազիան իր անկախ թագաւորութիւնն է ունեցած 785ին, բայց միայն 100 տարի է տեւած ու 985ին միացած է կենդրոնական Վրաստանի հետ:

Սվաներիա: Լեռնական ցեղերի մէջ դլխաւորներն են Սվանները, որոնք ծանօթ էին հին յոյն պատմիչներին: Բայ Սարաբոնի վրացական ցեղերի մէջ ամէնից գօրաւոր այս Սվաններն են եղած, որոնք կարող էին մինչեւ երկու հարիւր հազար ռազմիկ տալ: Այս ժողովրդի հին քաղաքակրթութիւնը վկայ են երկրում ցրուած ամրոցների, աշտարակների եւ տաճարների աւերակները: Այս լեռնցիք չատ տեւութեամբ պահպանել են իրենց ինքնավարութիւնն եւ միայն 96· դարումն է (Ց. Ք.), որ Վրացիք յաջողել են նրանց հպատակեցնել եւ միացնել Վրաստանին:

Միւս Վրացական լեռնցիներն են՝ Փշաւները, Խեւսուրները, Թուշերը, Մտիուլները

[3] Վրացերէնում ցեղական անունները չատախ վերջանում են ի հնչումով. եւ այս է, որ, ըստ Պ. Մաոի, ցեղական նշանակութիւն է տալիս այդ անուններին, ինչպէս՝ սոմէխ, կախ, մէգրէլ կամ մոսխ, կոլխ, չախ եւն: Անուններն ծագրի ին բառի բնական վերջաւորութիւն է, ինչպէս որ պահանջում է վրացական լեզուն:

© National Library of Armenia

եւ Ինգիլոյները, որոնք սակաւաթիւ խումբերից են բաղկացած:

Հին ժամանակ Վրացիք իրենց երկիրը բաժանում էին երկու մասի. արեւելեան կողմը կոչւում էր Էսպիրի իսկ արեւմտեանը Իսպիրի, իրրեւ աշխարհագրական դիրք ընդունելով Սպիր գաւառը: Յետին դարերում Իսպիրի կոչումը յատկացուել է միայն այն մասին, որ այժմ էլ Սպիր կամ Սպեր է կոչւում եւ գտնւում է Ճորոխի աւազանում:

Արեւմտեան Վրաստանի մասն է Իմէրէթիան (Iméréthie), Իմէրէլ ցեղի բնակավայրը: Իմերէլները հին ժամանակ չատ աւելի ընդարձակ տեղ են գրաւել քան այժմ. դրան ապացոյց է, որ նրանց անունը պահուած է Տայքի մի գաւառակում, որ հիմայ էլ Իմէրխեւ = Իմէրեան կիրճ է կոչւում: Չարեւան ցեղերը սրանց կոչում են Օդիշ:

Պատմական դեր են կատարած նաեւ Աճառները, այժմեան Աջարացիք: Այժմեան Աջարա գաւառը (Adjarie) հին Էգրիսն է, որի անունը գտնում ենք նաեւ Խորենացու մօտ Եգեր, Եգերխատան ձեւի տակ: Փաւստոս էլ յիշում է՝ իրրեւ Եգեր–սուանք: Էգրիս անունն անչուշտ այս Եգեր բառից է ծագել, որով հասկացւում էր հին ժամանակ ամբողջ արեւմտեան Վրաստանը մէջն առնելով այժմեան Իմէրէթիան, Գուրիան եւայլն: Խորենացին եւս Եգեր անուան անչուշտ ընդարձակ նշանակութիւն է տուել, մացնելով նրա մէջ նաեւ Լազերին (Ճաներ) եւ Եգերացի է կոչել ամբողջապէս Հայաստանի հիւսիս–արեւմտեան կողմը բնակող Վրացական ժողովուրդը:

Աջարացիք (Բաթումի չրջակայքում բնակողները) ԺԷ. եւ ԺԸ. դարերում Թրքական տիրապետութեան տակ բոնի կերպով մահմեդական են դարձել, բայց մինչեւ հիմայ էլ պահպանում են իրենց գաւառական Վրացական բարբառը:

Աջարացիներին անմիջական սահմանակից եւ ցեղակից են Գուրիացիները, որոնք քրիստոնեայ են մնացած: Գուրիան տարածւում է Սեւ ծովի եզերքից սկսած դէպի Արեւելք, գլխաւոր քաղաք ունենալով Օզուրգէթը:

Սամցխէ: Սա այն գաւառն է, ուր բնակուիլն են հաստատել հարաւից տեղափոխուած Մոսխերը եւ յոյն–լատինական աշխարհագրութեան մէջ Մէսխիա է կոչուած: Սամցխէ՝ իսկապէս այն բերդի անունն է, որ կառուցել է հռչակաւոր հայ զօրավար Սմբատ Բիւրատեանը, Ա. դարի վերջերը (Յ. Ք.), երբ ամբողջ այդ չրջանը — քրիստոնէութեան առաջին դարերում Հայոց լուսաւորչութեան տակ էր: Սամցխէ–Մէսխիան մասամբ հին Տայքն է, որի, ինչպէս առ հասարակ բոլոր այդ հին գաւառների բուն սահմանները դժուար է որոշել, ոչ Վրաց եւ ոչ Հայոց (Խորենացու անունով յայտնի) Աշխարհագրութեան մէջ: Այս գաւառը յետոյ սկսած է կոչուել նաեւ Սաաթաբէգօ, որ նշանակում է Աթաբէգների (նահանգապետի իմաստով) երկիրը, երբ ԺԳ. դարում վրաց իշխանները մահմեդական գերիշխանութեան ներքեւ սկսան կառավարել: Սրա գլխաւոր քաղաքն է Ախալցխան (վրացերէն Ախալցիխէ = Նոր բերդ):

Բուն կամ անձուկ մտքով Վրաստանը Քարթլին է, Թիֆլիս մայրաքաղաքով, որ կենդրոնական տեղ է գրաւում: Այս մասին քիչ վերջը:

Արեւելեան Վրաստանը կոչւում է Կախէթ, որ մտնում էր մեզ ծանօթ Ադուանից աշխարհի մէջ, իրրեւ սրա արեւմտեան մասը, եւ երկար ժամանակ Հայոց ազդեցութեան եւ իշխանութեան տակ է գտնուած: Կախէթը նոյնպէս չատ անգամ անջատ է եղած Թիֆլիսի Վրացական կենդրոնից եւ կռուած է Թիֆլիսում թագաւորող Բագրատունիների դէմ: Վրաց մեծարքայ Դաւիթ Վերանորոգիչն էր, որ ԺԲ. դարում վերջ տուեց այդ անջատման, գրաւելով եւ միացնելով կախէթը կենդրոնի հետ:

Հայ ընթերցողի համար հաճելի եւ չահեկան է Վրաց ազգային աւանդութիւնը Հայ եւ վրացի ժողովուրդների ծագման եւ Հայաստանի ու Վրաստանի կազմակերպման վրայ: Վրաց ազգային աւանդութիւններն էլ մերինների նման, դարերի ընթացքում ազգային կերպարանափոխումներ կրելուց յետոյ, հիմայ էլ բնիադատական բովից են անցնում, թէեւ ոչ այն խստութեամբ եւ այնչափ առարկայօրէն, որչափ մերոնք: Այս քննադատութիւնների միջոցով հին աւանդութիւնները, այդ հին գրաւոր յիշատակարանները չատ են իրենց նախկին կազմից տուժել: Բայց եւ այստեղ պիտի յիշատակեմ նոյնութեամբ, անփոփոխ, որովհետեւ այդ առասպելները, կամ առասպելախառն զրոյցները՝ առ հասարակ ժողովուրդների անցեալ ժամանակները ունեցած բարքերն ու գաղափարներն են պատկերացնում եւ ընկերական վիճակը պարզում մր առջեւ:

Վրաց պատմութեան ալբիւր «Վրաստանի կեանք» (վրացերէն՝ Քարթլիս Ցխովրէբա) կոչուած Տարեգիրքն, այս աւանդական չրջանն այնպիսի ձեւով է պատմում, որ անկասկած նրա հեղինակը հայազգի է, լաւ հմուտ ոչ միայն վրացերէնին, այլ նաեւ Հայոց Պատմութեան, մանաւանդ Մովսէս Խորենացուն...: Այս աւանդութիւնը ես յարմար կը բերեմ Վրաց Տարեգրքի հին հայերէն համառօտութիւնից, որ յայտնի է իրրեւ «Ջուանշէրի Վրաց Պատմութիւն» (ապ· Վեհնեակում). ես կը նշանակեմ միայն, փակագծի մէջ, այն մի քանի աննշան տարբերութիւններն, որ կայ այս հայերէն հին թարգմանութեան եւ վրացերէն բնագրի մէջ, ինչպէս որ հրատարակած եւ թարգմանած է Բրոսսէ:

«Յիշատակ արասցուք այժմ, սկսում է Ջուանշէր, դի Հայոց եւ Վրաց եւ Ռանաց եւ Մովկանաց եւ Հերանաց եւ Լէկաց եւ Կովկասեանց եւ Եգերաց հայր մի էր սոցա, Թորգոմ կոչեցեալ (վրացերէն բնագրում Թարդոմ կոչեցեալ, վրաց Գամբրայ, Ղամոս), որդի Թիրասայ, որդւոյ Գամբրայ, որդւոյ Յարէթի, որդւոյ Նոյի...: Եւ ընտրեաց յորդւոց նորա (Թորգոմի) արք ութ արիագոյն եւ անուանիք, առաջինն Հայկ (վրացերէնում ասուած է Հառս), երկրորդն Քարթլոս, երրորդն Բարդոս, չորրորդն Մովկան, հինգերորդն Լեկան, վեցերորդն Հերոս, եօթներորդն Կովկաս, ութերորդն Եգրէս[4]»:...

«Եւ Հայկն (Հառս) առաւել էր ուժով եւ քաջութեամբ, որ չեզեւ նման նմա ի վերայ երկրի ոչ յառաջ քան զքրհեղեղն եւ ոչ յետոյ՝ մինչեւ ցայսօր ժամանակի: Սոցա բազում՝ մինչեւ ցայսօր ժամանակի: Սոցա բանեաց Թորգոմ զաշխարհն իւր. եւ գկէսն (ցկէսն) Հայկին, եւ գկէսն եւթանց որդւոցն՝ ըստ արժելոյ նոցա (վրացերէնում ասուած է՝ նրանց երկցութեան կարգով)...: Հայկն՝ նրանց երկցութեան կարգով...» եւ այլն. էր իշխան եւթանցն եղբարց...» եւ այլն. Չարունակութիւնը նոյն է ինչ որ Խորենացու քով: Այս կերպով Հայը դառնում է աւագ եղբայր, իսկ վրացին նրա կրտսեր եղբայրը: Աչքունեւեան Ջուանշէր խօսում է այս կրտսեր եղբայրի՝ այսինքն վրաց նախահայր Քարթլոսի եւ սրա սերունդի մասին: «Եւ սա (Քարթլոս) դնացեալ ի լեառն, որ կոչի Ամրակ, չինեաց իւր տուն եւ ամրոց»: Նրան հետեւելով իւր տուն եւ ամրոց»: Նրան հետեւելով Քարթլոսի կինն էլ հիմնարկում է «դմայրաքերդն եւ զքաղաքն, որ կոչի Ռիլա, որ է Պարտիզաքաղաք[5]»:

Այս չինութիւնների յիշատակութիւնը կայ նաեւ Ջամչեանի մօտ, որ հայ պատմիչների վրայ հիմնուելով գրում է. «Որպէս զրէ պատմիչն Ուռպէլեանց եւ Վարդան ի Մխիթարայ Անեցւոյ... Քարթլոս՝ միւս եղբայրը Հայկայ դնաց յայլ կողմն հիւսիսոյ, որ կոչի Արմազ եւ անդ չինեաց իւր տուն եւ ամրոց, դոր կոչեաց Որբէբ[6] յանուն կրտսեր որդոյ իւրոյ:

«Եւ ի սոցանէ, չարունակում է Ջամչեան, ասէն վերոյիշեալ պատմիչք (Վարդան, Մխիթար Անեցի եւն) սերեալ զազգն Վրաց» (Ա· հտ 67):

Այնուհետեւ նոր ցեղեր գալիս խառնւում են առաջինների հետ: «Ի նմին ժամանակի, ասում է Ջուանշէր, նկին փախստականք ամանք ի Ցունաց եւ յԱսորոց եւ ի Պազրայ, նեղեալք ի թշնամեաց իւրեանց՝ յերկիրս Վրաց եւ ընկալան զնոսա յաղագս օգնելոյ նոցա ընդդէմ Պարսից: Զայնու ժամանակօք (Վրաց Տարեգիրքը սովորութիւն չունի թուական գործածելու) նկին եւ Հրէայքն, զերկան գործածելու) նկին եւ Հրէայքն, զերկան գործածելու) նկին եւ Հրէայքն, զերկան

Քարթլոսի որդիքն ըստ նոյն աւանդութեան, կոչւում էին Մծխէթոս, Գարդբոս, Կախոս, Կուխոս եւ Գաչխոս: Մծխէթոս, որ անդրանիկն է եղել, ունեցել է երեք որդի՝ Ուպլոս, Օձրխոս եւ Ջաւախոս: Այս բոլոր անուննները՝ Վրաստանի զանազան տեղերի, գաւառների կամ աւանների ներկայ կոչումներն են, որոնք իբր թէ Քարթլոսի որդիներից եւ թոռներից հիմնուելով, իրենց հիմնադիրների անուններով են կոչուել:

Նախնական Վրաստանի խօսած լեզուի մասին էլ Վրաց Տարեգիրքը աւանդում է. «Մինչեւ Նաբուգոդոնոսոր արքայի երուսաղէմն առնելը, Քարթլոսի սերունդի խօսած լեզուն հայերէն էր. բայց երբ այնչափ չատ ժողովուրդներ հաւաքուեցան Քարթլիում (Վրաստանում), վրացիք էլ զաղաբեցան հայերէն խօսելուց եւ այդ ժողովուրդների լեզուներից, այն է հայերէնից, վրացերէնից, խազարերէնից, ասորերէնից, երբայեցերէնից եւ յունարէնից կազմուեց վրացերէնը»: Նոյնը կրկնուած է Ջուանշէրի հայերէն թարգմանութեանը մէջ. «Հայերէն էր լեզուն վրաց եւ ապա սկսան այլայլիլ յազգացն, որ բնակեցան ի մէջ նոցա եւ եղեւ ամենեցունցն խառնակել եւ յայս միացեալ, որ այժմ ասի վրացերէն». քիչ վերջը դարձեալ՝ «Եւ յայնմ ժամանակի խօսէին ի Վիրս վեց լեզու, հայերէն եւ խազրի, ասորի եւ երբայեցի, յոյն եւ որ ի խառնից նոցա հաւաքեցաւ՝ վրացին»:

Այսպէս է աւանդում Վրաց ազգային մեծ ժամանակագրութիւնը հայ եւ վրացի ազգերի ծագումն եւ սկզբնական յարաբերութիւններն, որով պատուաւոր եւ առաջնակարգ տեղ է տալիս Հայկին եւ հայերէն լեզուին, արդարացնելով մեր պատմահօր խօսքը թէ հայը «հանուրց հիւսիսականաց վեհագոյնն» էր:

Վրաց Տարեգիրքը մանրամասնօրէն չիշում է թէ ինչ ժառանգութիւն են ստացել Քարթլոսն եւ իր 6 եղբայրներն, որ ես աւելորդ եմ համարում յառաջ բերել այստեղ: Եթէ համեմատութեան դնենք այս երկիրներն այն տարածութեան հետ, որ Հայկը — այսինքն Արմենեան է ձեռք բերել Ուրարտուի թագաւորութեան տիրելուց յետոյ, մենք կը տեսնենք, որ Տարեգրքի հեղինակը չատ չէ սխալուել: Ուրարտուի թագաւորութիւնը տարածուում էր Վանի լճից մինչեւ Սեւանայ լիճը, արեւելքում էլ մինչեւ Մալաթիա, Եփրատ գետի եզերքը: Նրա սահմաններն էին մի կողմից Ասորիք, միւս կողմից Ումմիայի լիճը:

Այժմ մի քանի խօսք էլ Վրաստանի եւ նրա ժողովուրդին տրուած տարբեր անունների մասին:

Վրաստանը՝ յոյն եւ լատին հին հեղինակները կոչել են Իբերիա (Iberia) կամ Իվերիա եւ Իվէրիա: Հայերը՝ Վիրք եւ Վրաց տուն: Պարսիկները եւ Արաբները՝ Գուրջի, Ջուրզ, Ջուրզան եւ Գիւրջիստան: Եւրոպացիները Géorgie, géorgien: Ռուսները՝ Грузія եւ грузин: Իսկ վրացիք՝ Քարթլի եւ քարթվել:

Ո՞րտեղից եւ ինչպէ՞ս են յառաջ եկել այս տարբեր անունները:

Վրացիների իրենք իրենց տուած քարթվէլ կոչման պատճառը՝ ազգային աւանդութիւնն է Քարթլոս նախահօրից առնուած (ինչպէս է հայ-ը Հայկից), գուցէ եւ կարդու ցեղից, որ հարեւից տեղափոխուել է Անդրկովկաս, ինչպէս վերը տեսանք: Ի սկզբան այս Քարթլի կոչումը յատուկ էր միայն կենդրոնական Վրաստանին — նախ Մծխէթա եւ ապա Թիֆլիս (վրացերէն՝ Տփիլիսի) մայրաքաղաքով: Երբ կենդրոնական իշխանութիւնը զօրացաւ եւ իր ազդեցութիւնը տարածեց, այդ անունը սկսեց տրուիլ ամբողջ վրացախօս երկրին: Այսօր բովանդակ Վրաստան կոչուում է վրացերէն «Սաքարթվելո» կամ «Սաքարթվէլօ», որ նրա ազգային-քաղաքական անունն է:

Պրոֆ. Կէկէլիձէ վրացի գիտնականը կարծում է թէ հին օտար մատենագիրների յիշած Իբէրիան կամ Իվէրիան, որ միեւնոյն է, իր տարածութեամբը համապատասխանում է այն վրացական նահանգին, որ վրաց լեզուն աւանդօրէն Հէր-էր-ի են կոչել: Այս բառի մէջ եթէ վերջին՝ տեղ նշանակող, էրի մասնիկը, հանենք, մնում է հէր, որ Իվէր-ևա անունի արմատն է հ-ն վ-ի փոխուած: Վրաց Տարեգիրքը Հայկի եւ Քարթլոսի եղբայր Հեր-ոսից առնուած է համարում, իրրեւ նրա ժառանգութիւնը, որ ի հարկէ աւատապետական է: Վրաց վախուշտ պատմագիրը Հէրէք նահանգը դնում է Կախէթում եւ նրան Խորանթօ անունն է տալիս:

Օտարները այդ Իբէրիա կամ Իվէրիայի տեղն էլ ճշդօրէն չեն որոշում: Բիւզանդացիք սխալմամբ Իվէրիա անունը տալիս են այնպիսի մի երկրի, որ իրապէս կամ անճուկ մաքով վրացական հող չէր: Կոստ. Պորփիւրոդէն կայսերական հեղինակը, Ժ. դարում, իրրեւ Իվէրիա է նկարագրում Գուգարքը կամ ինչպէս Բրոսէ որոշում է Արտանուջի գաւառը [9], որ հեռու է կենդրոնական Վրաստանից: Ինչ որ էլ լինի, պարզ է, որ յոյն եւ լատին պատմագիրները այդ կոչումի տակ հասկանում էին Վրաստանն ու Վրացի ժողովուրդը:

Հայերը իրենց այս հիւսիսային դրացին կոչել են Վիրբ եւ Վրաստան: Վրաց Տարեգրքի թարգմանողն ու հետազօտողը ակադեմիկոս Բրոսէ ենթադրում է թէ այս Վիր-ը (Վիրքի եզակին) պարզապէս հայերէն վեր, ի վերայ բառն է եւ թէ յոյներն ու լատիներն սրանից են առել իրենց գործածած Իվէրիա, Iberia անունը: Նա հիմնւում է երկիրների աշխարհագրական դիրքի վրայ: Վրաստանը վերեւ էր, հիւսիս, իսկ Հայաստանը ներքեւ, հարաւում: Այս պատճառով էլ ասում է Բրոսէ, Խորենացին «վերին այն աշխարհ» է ասել Վրաստանի մասին (Բ. 8) վերիացի իրրեւ ածական: Այս միեւնոյն հիման վրայ, չարունակում է դաղափարի դիտնականը, Վրացիք էլ Հայերին կոչել են եւ կոչում են սոմէ-խ-ի, իսկ Հայաստանը՝ Սոմխ-էթ-ի, որ բուն Բրոսէի «բաւական կանոնաւորապէս» ծագում է «Սամխրէթի» բառից, որ նշանակում է հարաւ: Ակադեմիկոսն, Մառ չէ ընդունում այս բացատրութիւնը եւ հետեւեալ կերպով է մեկնաբանում. «Վրացիք, ասում է նա, Հայերի հետ առաջին անգամ ծանօթացան Վրացական Սոմխէթ պատառում բնակող իրենց ցեղակիցների միջոցով եւ այդ գաւառի բնիկների անունը տարածեցին իրենց հետ միասին բնակող Հայերի վրայ: Այս միակ դէպքը չէ, չարունակում է Մառ, վրացերէնում: Վրացիք Յոյներին կոչում են ոչ թէ հելլէն, յունական եւ այլն, ինչպէս Հայերը, այլ Բերձէնի: Այս զարմանալի կոչումն անկասկած տեղական Վրացական այն ցեղի անունն է, որի միջոցով արեւելեան վրացիներն առաջին անգամ ծանօթացել են Յոյների հետ» [10]:

Այնուհետեւ Պ. Մառ տարբեր մեկնութիւն է տուած սոմխ-ի կոչման, այսինքն թէ նա կազմուել է սոն (= սվան, վրաց. ցեղի անուն) եւ մէսխ (= հին Մոսխ) անունից, որ կրճատուելով դարձել է սոն-մէսխ ներից, որ կրճատուելով դարձել է սոն-մէսխ եւ վերջապէս սոմէխ-ի վրացերէնի յատուկ ի վերջատուրութեամբ: Մոսխերի անունով նրանց բնակավայրը կոչուել է Մէսխէթ-ի, ուր չատ հին ժամանակներից ի վեր եւ մասնաւոր քրիստոնէութեան առաջին դարերում մեծ բազմութեամբ Հայեր էին բնակւում, որոնք իրենց կրթական եւ կրօնական կարեւոր հաստատութիւններն ունէին: Այս պատճառով էլ Վրացիք Սոմխէթ-ի էլ են կոչել, իսկ հայ պատմագիրները՝ Վիրահայք: Այս Մէսխէթիի բարբառն էր, որ Ե. դարում վրացիների գրական լեզուն դարձաւ եւ որով առաջին անգամ Ս. Գիրքը թարգմանուեց հայերէնից եւ ապա բուն վրացերէնի, այսինքն այժմեան բարբերէնի կամ քարթվէլերէնի: Վրացիք երբեմն «արամեան» կամ «էրմէնեան» բառն էլ են գործածել: Այսպէս է՝ դոնէ ԺԷ.—ԺԸ. դարերի վրացական գրադոնէ ԺԷ.—ԺԸ. դարերի վրացական գրականութեան մէջ, փոխանակ սոմէխի ասելու եւ բացատրել են թէ այդ «էրմէնեան»ը «հայկեան (հաոսեան) ծագումից» է [11]:

Գալով Հայոց գործածած վիր կոչումին, արի հիման վրայ կազմուել են Վիրբ եւ Վիրաիայք տեղագրական անուննները, նա անչուշտ յունական Իվէրեայի կամ հնագոյն Իվիրեայի վիր արմատն է: Այժմ էլ ձեւով Իվիրեայի վիր արմատն է: Այժմ էլ Աֆոս լեռան Վրացական վանքը կոչուում է Իվիրոն: Այս միեւնոյն բառն է, ինչպէս կան եւ Iberia տեղագրական կոչումները: Ոչ մի տարակոյս չկայ, որ «Վիրք» գործածուած է այն մաքով ինչպէս Հայք (Մեծ Հայք, փոքր Հայք...) իրրեւ Հայերի բնակած երկիր: — Մովսէս Խորենացու «Վեհաբուղ» ածականն, որի վրայ հիմնւում է Բրոսէ, կայ նաեւ ուրիշ հայ պատմիչների մօտ: Այսպէս Ագաթանգեղոսի Լատինվերսայի գրում է «Թէ զարքայն երկրորդ անգամ դարձ արքայս Թագաւորն երկրորդ անգամ դարձ առնէ ի վերայ աշխարհին Տայոց, յորում

[9] Brosset, Additions, էջ 82:

[10] Н. Марръ, Крещеніе Армянъ, Абхазовъ и Алановъ. Арабская версія. С. Петербургъ, 1905.

[11] Ի. Մէլիքսէթ-Բէկ, Գեղարուեստ, թ. 7, 1921, Թիֆլիս:

պան է, որ հոսում է Մծխէթայի մօտ, իսկ «Մերկը» Հայոց «Հաքքն» է:

© National Library of Armenia

պարտեցան զօրք Վեռիացւոց» (Գլուխը Բ.)։ Այս «Վերիացւոցը» կամ «Վեռիացւոցը» ճըշտօրէն «Իվէրիացւոց» բառն է, սկզբի իւ կրճատումով։

Այս հին Վերիացի կոչումն է, որ տիրապետող է դարձել մեր մէջ Վրացի ձեւի տակ եւ ըստ այնմ էլ Վրացերէն եւ Վրացական, թէեւ «Վրական» բառը դեռ գործածական է ոմանց մօտ, բայց ոչ բնաւ Վիրերէն։ Վրացի ձեւը նոր չէ, ինչպէս ոմանք կարծում են· այդ բառին հանդիպում ենք դեռ եւս Թ· դարի յունական գրականութեան մէջ Թրակիայում, ուր բնակւում է եղել, ոմն «Վարդ վրացի» (Վարդաս ὁ' βρατείς) ինչպէս ասուած է, յունարէն բնագրում Βάρδας ὁ βρατείς, Հայր P· Peeters գրում է· «Vard l'ibérien, dont la nationalité est indiquée non dans sa langue natale քարթվէլի, mais en traduction arménienne»· Նա ենթադրում է թէ այդ «Վրացին» հաւանականաբար Տայք-Կղարջքից էր (Վիրահայքում), ուր հայ-վրացական խառն բնակչութիւն կար [12]։

Վրացի՝ պարզապէս նշանակում է Վիրքացի, յոգնակի չինող ի բնական անկումով, այնպէս ինչպէս օրինակի համար Տայք — տայեցի։

«Հին մատենագիրներէ ոմանք (Յովսէպոս Եւսեբ.) գրում է Հ· Տաշեան (Հանդ· Ամս·, 1931, էջ 203), Hyrkanoi, Hurkani կը կոչեն Վրացիները, այն հինպրսկ· յոգնակի ձեւը՝ *Wrgân, որմէ Gurgân, նոյնպէս Վրացի՝ *Wr-č, կամ *Wr-ğ, ուսում Gur-ğ..., որ Յորինացեալ անունը կրող Աշխարհագրութեան մէջ գրուած է «Վարչան, որ է Վիրք»։

Գուրջիստան անունը մահմետական գրականութեան մէջ Մասուդիից, այսինքն Ժ· դարից յառաջ չէ պատահում։ Իսկ Ջուրզան անունը գտնում է Ի· դարի մի արաբական վաւերագրի, Հաբիբ գօրապետի Հայաստանի պատրիկին ուղղած նամակում, եթէ ի հարկէ այդ նամակը վաւերական է։

Գուրջի եւ Գուրջիստան անունը նախ Պարսիկներն են գործածել եւ ապա նրանց հետեւել են Թուրքերը։ Աւելի հին է Արաբների գործածած Ջուրզ, Ջուրզան կամ Ջուրջան կոչումը, թէեւ հաւանական է, որ այս էլ Պարսիկների տուած Գուրջի անուան հետեւողութեամբ է։

Եւրոպացիների գործածած Géorgie եւ géorgien անունը առաջին անգամ ԺԳ· դարում Վրաստանից դարձող լատին կրօնաւորներն են եւրոպա բերել։ Այս բառն եւս նոյն պարսկական գուրջի անուան հետեւողութիւնն է թւում, թէեւ ըստ ոմանց այդ անունը ծագում է Ս· Գէորգ (St· Georges) անունից, որ Վրաստանի պաշտպան սուրբն է եղած եւ նրա գիւանաշանը։

Ռուսերի գործածած грузин (գրուզ-ին) եւ Грузія (Գրուզ-իա) կոչումը միեւնոյն պարսկական ջուրզ — գուրզի անունից է։ Ռուսերը Грузія — Վրաստան անունը տուել են նախ այն գաւառին, որի հետ անմիջական յարաբերութիւն են ունեցել, այն է Կախէթին։ Այնուհետեւ կայսերական հրովարտակներում այդ անունը տրուած է նաեւ կենդրոնական Վրաստանին։ Վրացական միւս նահանգները, Մինգրէլիան, Գուրիան, Սամցխէն եւ այլն չէին մանում այդ անուանակոչութեան մէջ։ Կայսերական հրովարտակները Վրաստանի համար գործածել են անխտիր երբեմն նաեւ թէ՛ հին յունական ձեւով «Իվէրական երկիր» բառը եւ թէ՛ վրացական ձեւով Քարթալինիա եւ քարթալինեան, (Карталинскій)։

(Շարունակելի։) ՍԱՐՈՒԽԱՆ

[12] «Հանդէս Ամսօրեայ»ի 1927, Նոյ·–Դեկ·, յօրելեանական Թիւը, էջ 727։

ՆԵՐՈՆ ԿԱՑՍԵՐ ԵՐԻՒԵԼԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԴՐ· ՎԵՌՆԵՐ ՋՈՒՐ

(Շարունակութիւն եւ վերջ։)

ԳԼՈՒԽ Գ·

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՋՕՐԱՇԱՐԺԸ

Նախորդ գլուխներու մէջ փորձեցինք պարզել Ներոն կայսր վերջին տարիներու արեւելեան քաղաքականութեան նպատակները։ Կը մնայ մեզի դեռ ի վեր հանել թէ ի՛նչ պատրաստութիւններ տեսնուած էին արեւելեան մեծ արշաւին համար եւ թէ մինչեւ ո՛ր աստիճանի լրացած էին անոնք վերջին կեսարազունի անկման պահուն։ Ա՛ս այս պղպեւրները բաւական յորդահոս են, վասն զի չատ լրիւ են մեր տեղեկութիւնները հրէական պատերազմի մասին, որ մղուեցաւ գլխաւորաբար արեւելքի գրաւման համար նախապատրաստուած գունդերով եւ զարձեալ վասն զի 69ին՝ չորից կայսերաց տարւոյն մէջ կատարուած զօրաշարժները ճշդիւ յայտնի են։ Ի մասնաւորի մեծարժէք է Յովսեփոսի ծանօթ եւ յաճախակի քննուած լեգէոններու տախտակը, որ հռոմէական կառավարութեան պաշտօնական տուեալներու վրայէն, մեզի զրեթէ անթերի պատկեր մը կու տայ 66ի պարտեան բանակաբաժիններու դեռեզման մասին [1]։

Մեր քննութեան ելակէտ պիտի ծառայէ, այն զինուորական կացութիւնը, զոր հռոմէացիներ արեւելքն ունէր պարթեւական մարտին վերջաւորութեան։ Այն միջոցին, ինչպէս տեսանք, տարական նահանգներու մէջ կորբուլոնի հրամանատարութեան տակ եօթը լիակատար լեգէոն կար (Գլ· Ա, յօդ· 3)։ Այսոնց թիւ լեգէոն կար (Գլ· Ա, յօդ· 3)։ Այսոնց հինգը կը պատկանէին տարական բանակին, որ մշտապէս արեւելքի մէջ հաստատուած էր, տասնք էին հայկական պատերազմին երեք քաղաքամբաւ լեգէոնները՝ Գ Գաղղիականը, Զ Երկաթապատը եւ Ժ Փրետենսեանը եւ Պետոսի երկու փոքրաթիւ լեգէոնները՝ Դ Սկիւթականը եւ ԺԲ Շանթահարը [2]։ Ասոնցմէ զատ 60ական թուականին սկիզբը վերին հրամանատարին տրամադրութեան տակ էին երկու դանուբեան լեգէոններ՝ մէսիական ե Մակեդոնականը եւ պանոնեան ԺԵ Ապողինարեանը։ այս ամէնուն վրայ կ'աւելնային դեռ Դանուբէ եւ Նեղոսէ բերուած պահակային զունդերը՝ անդրազդին լեգէոնի մը հեծեալ գունդերը՝ ստուարութեամբ։ Վերին հրամանատարը 63ին բանակն երկու խումբի բաժնած է։ Իր երկու հայկական լեգէոններով՝ Գ Գաղղիական եւ Զ Երկաթապատ՝ եւ Իլիրիայէն ու Եգիպտոսէ ուժեղացումի համար բերուած ընտրեալ գունդերով վարած է ինքը պարթեւական վերջին արշաւանքը։ Իսկ կիլիքեան վերջին՝ Փրետենսեանը եւ Պետոսի երկու լեգէոնները յանձնած է Ասորիքի պատուիրակին՝ Կ· Կեստոս Գաղղոսի եփրատի սահմանին պաշտպանութեան եւ Ասորիքի խաղաղութեան ապահովութեան համար (Տակ· Տ· Ժե, 26)։ Այս կարդադրութիւնը հիմ առնելով՝ փնտռելու ենք բանալին 66 տարւոյն լեգէոններու այն բաժանման, ինչպէս կը պատկերանան անոնք Յովսեփոսի լեգէոններու տախտակին մէջ եւ կը ներկայացուին Գաղղոսի դէպի Հրէաստան կատարած անյաջող արշաւին վրայ անոր տուած տեղեկութիւններով։

1· Արեւելեան բանակը 66ի գարնան։

Վերջին պարթեւական պատերազմին բոլոր արեւելեան բանակաբաժիններու համար կենդրոնական վերին հրամանատարութիւն մը հաստատուած էր։ Արեւելքի նահանգներու կուսակալները պարտաւոր էին կորբուլոնի զինուորական հրամաններուն հետեւիլ։ Ռանդէյի 63ի նախաձեռնութեան շարունակուելուն անմիջական պատճառը բարձրած էր։ Թէ արդեօք կորբուլոն իր արտակարգ լիազօրութիւնը մինչեւ իր յետկոչումը՝ 66—67ի ձմեռը, պահա՞ծ է, այս հարցը հիմնական նշանակութիւն ունի։ Իր 63—66 տարիներուն ունեցած դիրքի մասին մեզի հասած տեղեկութիւններուն յենլով՝ փորձենք իր իշխանութիւններուն պատկերը կազմել։

Նախ եւ առաջ այս չրջանին կ'իյնայ հանգամանաբար՝ կորբուլոնի հովանաւորութեան տակ Աղուանիներու երկրին հետախուզումը։ Ուրեմն պարթեւական պատերազմին փորձ վարչին յանձնուած էր միանգամայն հիւսիսարեւելքի մէջ նոր պատերազմին նախապատրաստութիւնն. ասկէ կը հետեւցնենք թէ պոնտական զինուորական նորակազմ չրջանը, որ 63ին ստեղծուած էր իբրեւ խարիսխ կասպեան ձեռնարկին, իր վերին հրամանատարութեան մէջ էր։ Մինչեւ անգամ այնպէս կը թուի, թէ նոյն միջոցին նա Պոնտոսի եւ Գաղատիայի պատուիրակն եղած ըլլայ։ Վասն զի Տակիտոսի եւ Յովսեփոսի միաձայն վկայութեան համաձայն [3] Կապպադովկիան՝ կորբուլոնի նահանգը 66էն 69 տարիներուն կը զբաղնուէր առանց լեգէոններու պատուիրակի մը ձեռքը, զոր չենք կրնար նոյնացնել կորբուլոնի հետ։ Բացայայտ է թէ զինուորական պատրաստութիւններու վարիչը զժուարաւ

[1] Յովսեփոս՝ վասն հրէական պատերազմին Բ· 366 էջ·։

[2] Արեւելեան բանակին հինգերորդ լեգէոնի մը յաւելումով մշտատեւ ուժեղացումի մասին տես Գլ· Ա, յօդ· 1։

[3] Տակ· Պատմ· Բ, 81· Հր· Պատեր· Գ, 368։

© National Library of Armenia